դուցէ նման չի լինի իռլանդական կալուածական օրէնքին, բայց այնու ամենայնիւ հիմնուած կը լինի այն սկզբունքի վրա, որ երկիրը մշակող ֆերմերը իրաւունք ունի հողի համար որոշուած և փոքր տուրք վճարել, և կալուածատէրը իրաւունք չի ունենայ կամայականութեամբ բարձրացնել հողի գինը:

Մանչեստրի կաթօլիկների կլուբի ժողովի ժամանակ քննվում էին Անգլիայի յարաբերութիւնները Վատիկանի հետ: Սոլֆորդի եպիսկոպոսը մի քանի տեղեկութիւններ տուեց այդ հարցի դրութեան մասին: Նրա խօսքերի համեմատ, իռլանդական պատգամաւոր Էրրինգտօնին յանձնված է նախապատրաստական աշխատանքներ կատարել, որպէս զի անգլիական կառավարութեան և Վատիկանի մէջ ուղղակի յարաբերութիւններ սկսվեն: Եպիսկոպոսը հաւատացնում էր, որ իտալական կառավարութիւնը ոչ թէ միայն թշնամաբար չէ վերաբերվում այդ փորձերին, այլ ընդհակառակը յոյս ունի, որ Անգլիայի և պապի մէջ բարեկամութիւնը կողմնակի կերպով կոչնչացնէ իտալական կառավարութեան և պապի անբաւականութիւնները: Այդ ուղղութեամբ խօսել է իտալական արտաքին գործերի մինիստր Մանչինին անգլիական դեսպանի հետ Հռոմում:

Հնդկաստանի գործերի մինիստր լորդ Հարտինգտօն Վ.իլտօնի մէջ մի ճառ արտասանեց, որով յայտնեց, թէ պահպանողականների դաշնակցութիւնը Պարնելլի կուսակիցների հետ կարող է փոխել պարլամենտի մեծամասնութիւնը և արգելել համայնքների ժողովի կանոնադրութեան այն փոփոխութիւններին, որ կառավարութիւնը մտադիր է կատարել առաջ, քան թէ նա կառաջարկէ ժողովին ենթադրված վերանորոգութիւնները: Ճառախօսը յոյս ունի ազատամիտ կուսակցութեան եռանդի և տոկունութեան վրա: Խօսելով իռլանդական գործերի մասին, Հարտինգտօն յայտնեց, թէ, երբ երդվեալ դատաւորները աւելի խիստ դատավճիռներ կը կայացնեն կալուածական յանցանքների վերաբերութեամբ և երբ կանվեն աւելի եռանդոտ կարգադրութիւններ պօլիցիայի կողմից, որ թէ օգնութիւն և թէ աւելի ընդունակ կառավարիչներ կը ստանայ, Իռլանդիայի խաղաղացնելը աւելի արագութեամբ կը կատարվի: Կալուածական դատարանի մասնաժողովները, երկրի բոլոր բաժիններում ամենքի համար մատչելի դառնալով և արդարացի վճիռներ կայացնելով, կապացուցանեն, որ ինքնակամութիւնը և կալուածական միութեան գաղտնի հրահանգներին հնազանդվելը բոլորովին աւելորդ է: Դրանք են ազատամիտ կառավարութեան մտադրութիւնները և յոյսերը: Բայց մինիստրութիւնը չէ ծածկում այն ճշմարտութիւնը, որ նա կարօտ է օգնութեան թէ լենդլօրդերի կողմից և թէ իռլանդական հասարակութեան այն դասակարգերի կողմից, որոնք հետաքրքրված են սեփականութեան ապահովութեան հարցով:

Նորերում կառավարութիւնը վճռեց փակել կանանց կալուածական միութիւնը: Իռլանդիայի մէջ հրատարակվեցաւ պօլիցիայի կարգադրութիւնը, որի համեմատ օրէնքի հակառակ և յանցաւոր են ճանաչվում կանանց այն բոլոր ժողովները, որոնք կալուածական միութեան անուն են կրում կամ մի այլ անունով ձգտում են նոյն նպատակներին: Շատերը կարծում են, որ կանանց կալուածական միութեան մի քանի նշանաւոր առաջնորդները կը կալանաւորվեն և կը բանտարկվեն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 դեկտեմբերի: Լրագիրները հաղորդում են. գիւղական կալուածական բանկի նախագիծը, ստորագրված ֆինանսների, ներքին գործերի և պետական կայքերի մինիստրներից, ներկայացրած է պետական խորհրդին: Ֆինանսների մինիստրութեան մէջ ենթադրված է հարկ դնել սեփական արդիւնաբերութեան աղի պահեստների վրա: Լուրերը Կովկասի վերակազմութեան մասին տարաժամ են: Դոնդուկով-Կորսակով ցանկութիւն յայտնեց մի տարվայ ընթացքում ոչինչ փոփոխութիւն չանել, մինչև ինքը կը ծանօթանայ երկրի պէտքերի հետ: „Прав. Вѣстн." լրագիրը հաղորդում է. դեկտեմբերի 15-ին գիշերը հանգստութիւնը վերականգնված է Վարշավայի մէջ: Դեկտեմբերի 16-ին և 17-ին քաղաքը հանգիստ էր: Քաղաքի սահմանից դուրս կատարված փորձերը հրէական խանութները կողոպտելու համար, անաջող անցան, որովհետև հարկաւոր կարգադրութիւնները արված էին: Զօրքերը հարկաւորութիւն չունէին զէնք գործածել: Քրիստոնեաների և հրէաների կռւի ժամանակ վնասվեցան 24 քրիստոնեաներ և 22 հրէաներ: Նրանք ուղարկված են հիւանդանոց, որտեղ հրէաներից մէկը արդէն մեռաւ: Կալանաւորվածները շատ են: Անչափահասները վերադարձրած են ծնողներին, նրանց ուղղիչ միջոցների ենթարկելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 դեկտեմբերի: „Прав. Вѣстн." լրագիրը հաղորդում է. աղի վաճառման սահմանափակումը Դօնսկայա երկրի մէջ ոչնչացրած է: Լրագիրները դեկտեմբերի 19-ից հաղորդում են. Բեռլին ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ ռուսաց կառավարութեան հետ բանակցելու համար մի նոր բևեռային ճանապարհորդութեան մասին: Վանօվսկու նախագահութեամբ կազմվում է մի մասնաժողով չինական սահմանների մօտ մի նոր գլխաւոր-նահանգապետութիւն կազմելու մասին: Բացված են գեղծումներ փոստային բաժնի մէջ: Օրինակ Թուրքեստանի մէջ 40,000 րուբլ ստացվում է իւրաքանչիւր տարի մի փօստային տրակտի համար, որ գոյութիւն չունի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

րում կայ արդէն մի մի հայ պրոֆեսոր. ինչի, ուրեմն, նրանցից մէկը չէր կարող ժամանակով դառնալ և ռեկտոր այս կամ այն համալսարանի, և չէր կարող ձգտել իրագործել մի համալսարան Թիֆլիսում, քանի որ բարձր ուսում ստացածները հայերի մէջ հազարաւոր են, քանի հողը այդ տեսակ գործի համար պատրաստ է, քանի պատրաստ կայ և այն շրջանը, որ կարող է արդիւնաբերել այդ տեսակ տիպեր:

Եթէ Քիշմիշեան իր օր. Բերոյեանցի տիպի մէջ ներկայացնէր մի հայ աղջիկ, որ գնացել է Ամերիկա և այնտեղի մի համալսարանում ուսում աւարտելուց և կին-պրոֆեսոր դառնալուց յետոյ վերադառնում է Հայաստան, այդտեղ մի իգական համալսարան հիմնելու նպատակով,—դա կը լինէր մի անբնական, իր տեսակի տակ ոչինչ իրական հիմք չունեցող իդէալական անձնաւորութիւն: Բայց Քիշմիշեանի Վարդուհին ինչքան էլ իդէալացրած լինէր, հաւանական է, հնարաւոր է, ունի իր տեսակի տակ մի հաստատուն, իրական հիմք: Մեզանում հարիւրներով արդէն կարելի է հաշուել քաղաքային և դատական վարժուհիները, ինչի հնարաւոր չէ մի վարժուհի, որ նուիրէր իր ուժերը գիւղական դպրոցի մէջ գործունէութեանը. Նա յաջորդաբար կերպով ստեղծված մի, թէև իդէալական, հետևանք կամ արդիւնք է արդէն պատրաստված իրական շրջանի: Ճշմարիտ է, մեր վարժուհիների մեծ մասը յանձն են առնում այդ պարապմունքը ոչ թէ ազգասիրութիւնից դրդված, բայց իրանց օրական ապրուստը հայթայթելու համար, բայց կային և կան նրանց մէջ մի քանի սիրողներ, որոնք անվարձ են աշխատում: Նրանք դեռ քաղաքներում են գործում և ոչ գիւղերում, բայց այդ էլ այսօր կամ վաղը, հաւանականութեան թէօրիայի վրա հիմնվելով, կարող է լինել: Գուցէ շատերը մեր օրիորդներից, որոնք իրանց նուիրել են ազգային գործունէութեանը, անկեղծ չեն և հէնց որ աւելի լաւ պարապմունք են գտնում կամ պսակվում են, այնուհետև թողնում են իրանց գործունէութիւնը. բայց շատ կարելի է, որ նոյն իսկ այն րօպէին, երբ յանձն են առել վարժուհու պաշտօնը, անկեղծ էին, միայն ույժ, տոկունութիւն, եռանդ, հաստատամտութիւն չեն ունեցել շարունակել մինչև վերջը իրանց ընտրած գործը....

Ուրեմն Վարդուհին, ինչքան էլ իդէալացրած լինէր, նա այնու ամենայնիւ ռէալական տիպ է: Նա Ջանումեանցի ստեղծագործութիւնն է. այն բարոյական զարկը, որ նա ստացել է Ջանումեանցից, այն աստիճան զօրեղ է, բժիշկի ցանած գաղափարների սերմերը նրա սրտում այն աստիճան խոր արմատներ են գցել, որ մինչև անգամ այն ժամանակ, երբ ինքն Ջանումեանց յայտնվում է մի մարդ, որ գործնական նպատակի համար կեղծաւորում էր, երբ նա մինչև անգամ ինքն դաւաճանում է իր քարոզած գաղափարների իրագործմանը,—օրինակ Բերոյեանց, եթէ այդպէս կարելի է ասել, ինէրցիայով, առաջուց ստացած բարոյական ուժեղ զարկի ազդեցութեան տակ, դարձեալ հաւատարիմ է մնում իր փայփայած իդէալներին: Նա կարծես ուզում է ասել Ջանումեանցին: «Դու, որ իմ ուսուցիչն ես եղել, իմ վարդապետը, իմ իդէալը, դու դաւաճանեցիր քո գաղափարներին. դու չես գնում, իսկ ես գնում եմ....»

Եթէ օր. Բերոյեանցի տիպը իդէալացրած է դէպի լաւը, թէև համակրելի և ամբողջ տիպ է, որի վրա, ինչպէս երևում է, հեղինակը գործադրել է իր ամբողջ սէրը, ուրիշ կողմից ինչպէս ասեցի, Աթոյեանց ադվօկատը իդէալացրած է դէպի վատը: Բայց այդ ասելով ես չեմ ուզում ասել թէ համալսարանականների մէջ չը կան Աթոյեանցի պէս անազնիւներ. նրանից էլ աւելի անազնիւներ կան: Միայն այդ դէպի վատը իդէալացրած համալսարանականի տիպը այն պատճառով չափազանցրած և անբնական է, որ չափից դուրս ցինիկական է և աներես: Մեր համալսարանականները այդպէս չեն լինում. նրանց մէջ լինում են և նոյնքան և աւելի անբարոյական, աւելի անազնիւ անձինք, քան թէ Աթոյեանց, բայց միշտ դիմակը երեսին, միշտ վայելուչ ձևերով, միշտ տակտով, աւելի խորամանկ, աւելի եզուիտ, աւելի յարմարվող: Քիչ կան, միթէ, դիպլօմատներ, որոնք դնում են ամենից վեր անձնական շահը, քիչ են միթէ այնպիսիներ, որոնք աշխատում են պսակվել չը սիրած, տգեղ աղջկայ հետ, միայն այն պատճառով, որ աղջիկը փող ունի, և դեռ եկեղեցու սեղանի առջև իր նշանածի հետ կանգնած, այդ տեսակ մի բարձր ուսում ստացածը գուցէ մտածում է արդէն. «Ես սրա հետ կը պսակվեմ, բայց նոյն իսկ սրա փողով կարող եմ հազար ու մի գեղեցիկ սիրուհիներ պահել ինձ համար»: Եւ նա այդ իրագործում է պսակվելուց յետոյ: Իսկ Աթոյեանց, դեռ Սօֆիայից վերջնական համաձայնութիւնը չը ստացած, նրա տանը, երբ նա ամեն րոպէ կարող է դուրս գալ միւս սենեակից, արդէն առաջարկութիւն է անում Վարդուհուն դառնալ իր սիրուհի: Ոչ, մեր համալսարանականը այդքան ցինիկական, անզգոյշ, անտակտ կերպով չէ վարվում: Աթոյեանց նոր ծանօթանալով Սօֆիայի հետ, անմիջապէս սկսում է վիրաւորել նրա ամենասուրբ գաղափարները, նրա ազգային ըզգացմունքը, որով նա պարտական է Ջանումեանցին, սկսում է իսկոյն հայհոյել Ջանումեանցին: Ընդհակառակն, Սօֆիայի շնորհը վայելելու համար, նա որպէս համալսարանական, պէտք է կեղծ կերպով յարմարվէր նրա սիրած գաղափարներին, մինչև որ սա նրա կինը դառնար: Իսկ նա, Աթոյեանց, առաջին ծանօթութիւնից արդէն թէ Սօֆիային և թէ Վարդուհուն սկսում է քարոզել որ Ջանումեանց և նրա պէսները կեղծաւոր մարդիկ են: Այսինք թէ, այդ կողմից այդ անբարոյական մարդը ուղիղ է ասել և զարմանալի տպաւորութիւն է անում Քիշմիշեանի պիէսայում որ երկու համալսարանականներից ամենաանբարոյականը աւելի անկեղծ է, քան թէ միւսը, որ այն աստիճան անբարոյական չէ. բայց որտեղ էք տեսել մեր երիտասարդների մէջ այդ աստիճան անկեղծ անբարոյականութիւն, այդ աստիճան անկեղծ յանցանք: Վարդուհին Սօֆիայի բարեկամուհի է, Աթոյեանց գալիս է նրանց տուն, Վարդուհին գիտէ թէ նա դիտաւորութիւն ունի պսակվել Սօֆիայի հետ, Աթոյեանց գիտէ թէ Վարդուհին կարող է պատմել իր բոլոր խօսքերը Սօֆիային,—և Աթոյեանց այնու ամենայնիւ այն աստիճան անտակտ և անզգոյշ է իր անամօթութեան մէջ, որ երբ որ Վարդուհին նրան ասում է թէ Սօֆիան այսօր չէ կարող դուրս գալ, քիչ տկար լինելով, առանց այլ և այլութեան պատասխանում է. «փոյթ չէ, նա ինձ հարկաւոր չէ, բաւական է որ դուք այստեղ էք, ես ձեզ էի ուզում տեսնել, ձեզ հետ եմ ուզում խօսել»:

Ասելով որ Աթոյեանց վնասակար և անբարոյական մտքեր է յայտնում, ես չեմ ուզում ասել որ մի հայ համալսարանական այդ տեսակ մտքեր չէ յայտնում: Ես շատ անգամ անձամբ լսել եմ որ հայ համալսարանականները աւելի էլ վնասակար, աւելի էլ անբարոյական մտքեր են յայտնում. անձնական շահ, արհամարհանք դէպի ազգային գաղափար, կոսմօպօլիտական մտքեր,—ահա մեր բարձր ուսում ստացածներից շատերի համոզմունքը: Բայց նրանք գիտեն տեղը և ժամանակը, թէ երբ և ուր կարելի է յայտնել այդ տեսակ մտքեր: Աթոյեանց սպասում է իր շահը Սօֆիայից և Վարդուհուց, մինից որ նա նրա կինը դառնայ քսան հազարի բաժինքով, միւսից որ իր սիրուհի դառնայ,—պարզ է որ դա անգործնական կը լինէր անմիջապէս յետ մղել նրանց, նրանց առջև ոտնակոխ անելով այն բոլոր մտքերը, որոնք երկուսին էլ թանգ են: Նա իսկապէս ոչ թէ միայն աղջիկներից բայց և ծեր Գուլեանցի մտքերին պէտք է շողոքորթէր և միայն կարող էր վիճել Ջանումեանցի հետ, նրան խայտառակել....

Շատերից լսել եմ Քիշմիշեանի դէմ ուղղված հետևեալ մեղադրանքը: Հայ բարձր ուսում ստացածը երբէք չի աշխատի մի հայ վարժուհու, որ իր աշխատանքով է ապրում, իր պահովի կին դարձնել. նա այդ կանի մի օտարուհու հետ, բայց ոչ երբէք հայուհու հետ:

Բայց եթէ մի համալսարանական կարող է այդպէս վարվել մի օտարուհի օրիորդի հետ, ինչի հեղինակը իրաւունք չունենայ իր պիէսայի մէջ ներկայացնել նոյն համալսարանականին, որ նոյն ձևով վարվում է և մի հայուհու հետ: Շատ անգամ հասարակութեան մէջ որոշ տրամադրութիւնն անգամ, առանց իրական գործի, առանց պատահած օրինակի, կարող է կատարեալ իրաւունք տալ հեղինակին դուրս բերել մի տիպ իր գրուածքի մէջ:

Երևակայեցէք որ դուք շատ համալսարանականներից լսած լինէք թէ սուտ թղթադրամ չինելը հարստանալու նպատակով, յանցանք չէ. արդէն այդ տրամադրութիւնը, այն երևոյթը որ համալսարանականների շրջանից կարող են ծնվել մարդիկ որոնք յանցանք չեն համարում սուտ թղթադրամի չինելը, իրաւունք է տալիս հեղինակին դուրս բերել բեմի վրա մի բարձր ուսում ստացած անձնաւորութիւն, որ զբաղվում է սուտ թղթադրամ չինելով:

Բացի դորանից շատ են ասում նրանք, որոնք հաւատացնում են թէ մեր բարձր ուսում ստացածները երբէք չեն արտասուրել, չեն փչացրել աղքատ հայ օրիորդներին.—լինեն նրանք վարժուհի, թէ ոչ վարժուհի, ու յետոյ, երբ նրանցով բաւական զուարճացել են, շպրտել են նրանց: Քանի կամենաք օրինակներ ցոյց տամ ձեզ: Միայն այդ դէպքերից ոչ մէնը իր վրա ուշադրութիւն չէ դարձրել, որովհետև ոչ մէնը հայ օրիորդներից, որոնք գայթակղված են եղել հայ երիտասարդներով, օրինակ Շատկօվկու պէս ընդդիմութեան զօրութիւն չէ ունեցել անձնասպանութիւն գործելու: Այդ պատճառով դէպքերը մնացին անյայտութեան մէջ: Օրիորդներից մէնը դարդից, կամ բարակցաւից մեռել է, միւսը փող ընդունելով վիժել է երեխային և դրանից մեռել է, երրորդը շպրտված լինելով իր անհարազատ երեխայի հետ, աղքատութիւնից հասարակաց կին է դարձել և այլն....

Չէ կարելի ասել, ուրեմն, որ Աթոյեանց իր անբարոյականութեամբ, իր անազնւութեամբ՝ անբնական, չեղած մի երևոյթ է մեր համալսարանականների մէջ, բայց նա անբնական տիպ է այն պատճառով, որ իր անբարոյականութեան մէջ չափից դուրս աներես, չափից դուրս ցինիկ է, իր յանցանքի մէջ չափից դուրս անկեղծ է:

(Կը շարունակվի)